ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «18» հունիսի 2019թ.

2019թ-ի հունիսի 11-18, ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ե. Սմբատյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ընդհանուր բաժնի պետ
Գ. Ստեփանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ընդհ. բաժնի ինֆ. համակարգերի կառավարման ինժեներ
Ա. Պահլավունի	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության գծով առաջատար մասնագետ
Բ. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի իրավաբան
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ե. Սմբատյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1. ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ե. Սմբատյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Մալուխ	51850

ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հունիսի 11-ի, ժամը «15:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտեր է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«Էկոմիքս» ՍՊԸ	Ք. Երևան Առնո Բաբաջանյան փող., 60/2 շենք	tenders@360shinbaza.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիը հայտերը կազմել և ներկայացրել են ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,

• Մասնակցի կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի և մասնակցի զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1*	-	«Էկոմիքս» ՍՊԸ	54391.67	65270

*տվյալ չափաբաժնի մասով վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Արա Դադունցի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել 5 աշխատանքային օրով: /բանակցություն/
4. Տիրան Լաճիկյանին՝ Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած «Էկոմիքս» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է ԵՋԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-19/87 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝ ծանուցել «Էկոմիքս» ՍՊԸ-ին միաժամանակյա բանակցությունների մասին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. «Էկոմիքս» ՍՊԸ գնային առաջարկը բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո մնաց անփոփոխ:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԵՋԷԿ-ՀՄԱՊՁԲ-19/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ՀՄԱՊՁԲ-19/87 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ե. Սմբատյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ստեփանյան _____

Ա. Պահլավունի _____

Բ. Հարությունյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____